

Գլուխ VI-ի բողոքի ընթացակարգը

1. Գլուխ VI-ի բողոքի ձևաթղթերը կարելի է ներբեռնել www.bart.gov կայքէջից կամ խնդրել Զաղաքացիական իրավունքների գրասենյակից (Office of Civil Rights, OCR): Հայցվորը կարող է նաև գրավոր հայտարարագիր ներկայացնել, որը պարունակում է ներոնշյալ տվյալները՝
 - a. Հայցվորի անունը, հասցեն և հեռախոսահամարը:
 - b. Բողոքի հիմունքը (ռասա, մաշկի գույն, ազգային ծագում):
 - c. Ենթադրվող խտրականության դեպքի կամ դեպքերի ամսաթիվը կամ ամսաթվերը:
 - d. Միջադեպի բնույթը, որը հայցվորի կարծիքով, հիմնված էր խտրականության վրա:
 - e. Դեպքի մասին տեղեկություններ ունեցող մարդկանց անունները, հասցեները և հեռախոսահամարները:
 - f. Այլ գործակալություններ կամ դատարաններ, որտեղ, հնարավոր է, բողոք է ներկայացվել, և կոնտակտային անձի անունը:
 - g. Հայցվորի ստորագրությունը և ամսաթիվը:
2. Եթե հայցվորը ի վիճակի չէ բողոք գրել, ապա OCR-ի անձնակազմը կօգնի հայցվորին: Եթե հայցվորը խնդրի, OCR նրան լեզվական կամ նշանային լեզվի թարգմանիչ կներկայացնի:
3. Հայցվորներն իրավունք ունեն բողոքելու ուղղակիորեն համապատասխան դաշնային գործակալություն: Բողոքները պետք է ներկայացվեն վերջին ենթադրվող միջադեպից հետո հարյուր ութսուն (180) օրացուցային օրվա ընթացքում:
4. OCR կսկսի իր հետաքննությունը բողոքի ստացումից հետո տասնհինգ (15) աշխատանքային օրվա ընթացքում:
5. OCR գրավոր կերպով կկապվի հայցվորի հետ բողոքի ստացումից հետո երեսուն (30) աշխատանքային օրվանից ոչ ուշ, եթե լրացուցիչ տեղեկությունների կարիք լինի: Եթե հայցվորը ժամանակին չներկայացնի պահանջվող տեղեկությունները, OCR-ն կարող է վարչականորեն փակել բողոքը:
6. OCR կավարտի իր հետաքննությունը բողոքի ստացումից հետո իննսուն (90) օրվա ընթացքում: Եթե հետաքննության համար լրացուցիչ ժամանակ է հարկավոր, հայցվորին կտեղեկացնեն այդ մասին: Հետաքննիչը հետաքննության մասին գրավոր զեկույց կպատրաստի: Չեկույցը պարունակելու է դեպքի նկարագրության ամփոփում, հայտնաբերված փաստեր և առաջադրվող ուղղիչ գործողություն:
7. Հայցորդին և պատասխանողին կամ պատասխանող բաժնին տրվելու է եզրափակիչ նամակ: Կողմերը կունենան հինգ (5) աշխատանքային օր եզրափակիչ նամակը ստանալու պահից բողոքարկելու համար: Եթե կողմերից ոչ մեկը չբողոքարկի, ապա բողոքը կփակվի:
8. Եթե անհրաժեշտ լինի, հետաքննության զեկույցը կուղարկվի համապատասխան դաշնային գործակալություն:

1964 թ. Զաղաքացիական իրավունքների ակտի Գլուխ VI-ը պահանջում է, որ Միացյալ Նահանգներում ոչ մի անձ ռասայի, մաշկի գույնի կամ ազգային ծագման պատճառով չմերժվի, չզրկվի նպաստներից, կամ իր նկատմամբ խտրականություն չցուցաբերվի որևէ ծրագրում կամ գործողությունում, որը դաշնային ֆինանսական օգնություն է ստանում:

Ցանկացած ոք, ով հավատում է, որ իր նկատմամբ խտրականություն է դրսևորվել, կարող է գրավոր բողոք ներկայացնել San Francisco Bay Area Rapid Transit District-ի Զաղաքացիական իրավունքների գրասենյակ: Դաշնային և Նահանգային օրենքը պահանջում է, որ բողոքները ներկայացվեն վերջին ենթադրվող միջադեպից հետո հարյուր ութսուն (180) օրացուցային օրվա ընթացքում:

Բողոքները կարելի է փոստով, ֆաքսով կամ Էլ. Փոստով ուղարկել ներոնշյալ հասցեով:

Կ Ա Պ Կ Ե Զ Մ Ե Զ Հ Ե Տ ՝

**SAN FRANCISCO BAY AREA RAPID TRANSIT
DISTRICT ATTN: Office of Civil Rights**
2150 Webster Street, Suite #0414
Oakland, CA 94612
Հ Ե Ռ ՝ 510-74-7333
Ֆ Ա Զ Ս ՝ 510-464-7587
www.bart.gov
officeofcivilrights@bart.gov

Ձեր իրավունքները 1964

թ. Զաղաքացիական

իրավունքների ակտի Գլուխ VI-ի
ներքո

Բողոքի ընթացակարգը

և բողոքի
ձևաթուղթը



Գլուխ VI-ն օրենք է





SAN FRANCISCO BAY AREA RAPID TRANSIT DISTRICT

ԳԼՈՒԽ VI-Ի ԲՈՂՈՔԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

Հայցվորի անունը			Տան հեռախոսահամարը
Տան հասցեն Փողոց	Քաղաք, Նահանգ	Փոստային կոդ	Աշխատանքային հեռախոսահամարը
Ռասա/Էթնիկական խումբ	Սեռ	Էլ. փոստի հասցեն	
Խտրականության ենթարկված անձ (եթե Հայցվորը չէ)			Տան հեռախոսահամարը
Տան հասցեն Փողոց	Քաղաք, Նահանգ	Փոստային կոդ	Աշխատանքային հեռախոսահամարը

1. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ (նշեք համապատասխան վանդակ(ներ)ը)`

☐ Ռասա ☐ Մաշկի գույն ☐ Ազգային ծագում

2. Ենթադրվող խտրականության գործողության(ների) ամսաթիվ _____

3. ՊԱՏՄԻՍԽԱՆՈՒՄ (այն անհատն, ում դեմ բողոք է ներկայացվում)

Անունը	
Պաշտոնը	Աշխատավայրը

4. Նկարագրեք՝ ինչպես են ձեր նկատմամբ խտրականություն դրսևորել: Ի՞նչ էր պատահել, և ո՞վ էր պատասխանատու:
Գրելու լրացուցիչ տեղի համար, հավելյալ թերթեր կցնեք:

5. Դուք այս բողոք ներկայացրել եք դաշնային, նահանգային կամ տեղային որևէ այլ գործակալություն, կա՞մ դաշնային կամ

նահանգային դատարան: ☐ Այո ☐ Ոչ

Եթե պատասխանը այո է, նշեք յուրանքյուր գործակալությունն, ուր ներկայացվել է բողոքը`

☐ Դաշնային գործակալություն ☐ Դաշնային դատարան
☐ Նահանգային գործակալություն ☐ Նահանգային դատարան
☐ Տեղային գործակալություն ☐ Ներկայացման ամսաթիվ _____

6. Տրամադրեք լրացուցիչ գործակալության կամ դատարանի կոնտակտային անձի տվյալները`

Անունը		
Հասցեն Փողոց	Քաղաք, Նահանգ	Հեռախոսահամարը

Ներբնում ստորագրեք բողոքը: Կցեք որևէ սատարող փաստաթղթեր:

Ստորագրություն	Ամսաթիվ
----------------	---------